ՄԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Ակադեմիկոս

ԱՐԴՅՈՒՆԱՇԱՏ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏՈՎ ԵՎ ՍՊԱՍՈՒՄՈՎ

Գարեգին Բ Կաթողիկոսին ճանաչում եմ արդեն երկար տարիներ: Որպես Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ՝ Գարեգին Սրբազանը տարբեր հանդիսությունների և միջոցառումների ժամանակ ասված օրհնության խոսքերով ու հոգևորականի կենդանի, անմիջական զրույցներով իր գործուն մասնակցությունն է բերել Հայաստանի մշակութային, գիտական և կրթական կյանքին:

Ինչպես գիտության մեջ, այնպես էլ, և առավել ևս, եկեղեցական կյանքում կարևորագույն խնդիրներից է անցյալի հոգևոր-իմացական ժառանգության պահպանումը և այսօրվա աշխարհի իրողությունների և ընթացքների հետ հարաբերումը, որը շեշտվեց նաև օծման ժամանակ նորընտիր Կաթողիկոսի ասած խոսքում:

Երկար տարիներ լինելով Հայաստանի Մայր ԲՈՒՀ-ի՝ Երևանի պետական համալսարանի ռեկտոր, անձնական փորձառությամբ եմ համոզվել, թե ուսանողների՝ որպես վաղվա գիտնականների, մանկավարժների և մասնագետների կյանքում ինչ կարևորություն ունի հոգևոր-բարոյական դաստիարակությունը և վերջինիս վրա խարսխված աշխարհայացքի ձևավորումը: Նախորդող տասնամյակներին, թեև խորհրդային գաղափարախոսության շղարշի ներքո, սակայն ազգային ու համամարդկային արժեքների վրա հիմնված աշխարհայացքով էին մեր ուսանողները կյանք մտնում և դառնում մեր երկրի քաղաքացիները:

Խորհրդային Միության փլուզմամբ փլուզվեցին նաև գաղափարաքաղաքական և սոցիալ-տնտեսական այն նախադրյալները, որոնց վրա հիմված էր այդ աշխարհայացքը, և, դժբախտաբար, նորի ձևավորման համար անհրաժեշտ ազգային-պետական շեշտված գործոններ դրանց չփոխարինեցին, և հիմա այդ «անաշխարհայացքայնությունը» լցվում է կա՛մ աղանդավորական գաղափարներով և կա՛մ ուժի ու բռնության վրա խարսխված հակամարդկային ու ապաբարոյական ընթացքներով, որոնք այսօրվա սերնդին կտրելու են մեր ազգային ակունքներից՝ դատապարտելով նաև գիտական-մասնագիտական ամլության:

Այս պայմաններում անասելիորեն կարևորվում է Եկեղեցու դերը ուսանողների և ընդհանրապես երիտասարդության աշխարհայացքը հոգևոր-

բարոյական ու ազգային-համամարդկային արժեքներով ձևավորելու գործում: Գարեգին Բ Կաթողիկոսի հրապարակային ելույթները և Արարատյան Հայրապետական թեմում ծավալած գործունեությունը մեզ վստահություն են ներշնչում, որ Հայոց Եկեղեցու գործունեության կարևոր ուղղություններից մեկն էլ լինելու է այս հարցը:

Վերջին տարիներին սերտ կապեր են հաստատվել Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի ու Մայր Աթոռի միջև: Ակադեմիայի կյանքին իրենց մասնակցությունն էին բերում և պատվավոր անդամներ էին երջանկահիշատակ Վազգեն Ա և Գարեգին Ա Հայրապետները: Արարատյան Հայրապետական թեմում ծավալած իր գործունեությամբ Գարեգին Բ Կաթողիկոսը ևս նպաստեց գիտա-ուսումնական կյանքի կազմակերպմանը՝ Երևանում գործող Հայորդյաց տների ուսումնական խմբակներից մինչև Սևանի Վազգենյան Դպրանոցն ու թեմական տարբեր կառույցները, որոնց իրենց աշխատակցությունն են բերում մեր ակադեմիական համակարգի ճանաչված շատ գիտնականներ: Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ եղած ժամանակ Գարեգին Սրբազանն ավելի մոտիկից ծանոթացավ Ակադեմիայի կյանքին ու հոգսերին, մասնակցեց այս տարեսկզբին գումարված Ակադեմիայի ընդհանուր տարեկան ժողովին: Հավատացած ենք, որ Գարեգին Երկրորդը, Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելով, իր մտավոր-կազմակերպչական ձիրքերը, կորովն ու հմտությունը, շնորհիվ որոնց նա այնպես բարեզարդեց Արարատյան թեմը, ի սպաս դնելով արդեն համազգային ծրագրերի ու նպատակների իրականացմանը, մեծապես կկարևորի նաև Հայաստանի Ազգային Ակադեմիայի մտավոր անգնահատելի ներուժը՝ առավել սերտացնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանի գիտության կաճառի միջև եղած կապերն ու համագործակցությունը: